ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/171

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Սենտրալ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սենտրալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Զաքարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «առանցքակալներ»-ի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21-01/032»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10091-2021 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 16.06.2021թ.-ի թիվ Ե/40/1552-21 գրության հիման վրա, 21.06.2021թ.-ին «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.06.2021թ.-ին:

22.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/171 համարի ծածկագիրը:

01.07.2021թ.-ին, 09.07.2021թ.-ին և 16.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 16.06.2021թ.-ի թիվ Ե/40/1552-21 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար առանցքակալների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն:

Մասնակցության հայտի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի ս/թ փետրվարի 24-ի թիվ 2 որոշմամբ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել առանցքակալների մատակարարման պայմանագիր:

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021 թ ապրիլի 13-ին կնքվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21-01/032 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ապրանքները մատակարարվել են մասնակի՝ 17-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ առանցքակալները պայմանագրի հավելված 1-ով սահմանված ժամկետում չի մատակարավել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ս/թ հունիսի 14-ի թիվ Ε/13/1493-21 գրությամբ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն ծանուցվել է կողմերի միջև 2021թ. ապրիլի 13-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21-01/032 պայմանագիրը 17-րդ չավաբաժնի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ, որը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Սենտրալ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սենտրալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սենտրալ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10091-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին:

«Սենտրալ» ՍՊԸ-ն 30.06.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի /այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ / գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ Ֆինանսների Նախարարություն կողմից «Սենտրալ» ՍՊԸ-ին/ այսուհետ՝ Ընկերություն/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/171 ծածկագրով ընթացակարգը/այսուհետ՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգ նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ Ֆինանսների Նախարարություն է ներկայացրել գրություն և կից նյութեր /այսուհետ՝ Գրավոր հիմքեր/:

Ուսումնասիրելով Ընթացակարգ նախաձեռնելու համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Գրավոր հիմքերը, հայտնում ենք, որ առարկում ենք դրանք.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Ընկերությունը սույն թ-ի փետրվարի 8-ին մասնակցել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21 ծածկագրով գնման ընթացակարգին և գնահատող հանձնաժողովի փետրվարի 24-ի թիվ 2 որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից ՝ 1, 2, 4, 5, 6, 10, 13, 17 և 21, այնուհետև ապրիլի 13-ին կնքվել է առանցքկալների մատակարարման պայմանագիր

2. Պայմանագրի 2.1 կետի ենթակետերի

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած 17-րդ չափաբաժնի մասով մատակարարում չի իրականացվել՝ 420 000 դր գումարային արտահայտությամբ թվով 10 հատ առանցքակալ:

Ընկերության կողմից Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Ընկերությունը համդիսանում է պահեստամասեր և առանցքակալներ արադրող մի շարք ռուսական և եվրոպական ընկերությունների հատ համագործակցող ներկայացուցիչ Հայաստանում:

2. ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21 ծածկագրով գնման ընթացակարգի պարզաբանումների ընթացքում մասնակցելու ժամանակ Ընկերությունը ստացել ռուսաստանի գործարանից գնային առաջարկ ըստ պահանջվող տեխնիկական բնութագրի և ներկայացրել՝ հավելված 1.1 տեսքով:

3. Հայտերի բացվելուց հետո, որպես ցածր գնային առաջարկ ներկայացրած Ընկերություն գործարան է ուղղարկել պատվեր հայտ 1, 2, 4, 5, 6, 10, 13, 17 և 21 չափաբաժինների մասով՝ սահմանված տեսականին ըստ քանակի ռեզերվում ընդգրկելու և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին մատակարարելու համար:

4. Գործարանի կողմից իրականացվել է պատվեր հայտի թարմացում, որը հանգեցրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվող պայմանագրում առաջացող խնդիր, որի հետ Ընկերությունն ուղղակիորեն կապ չունի:

4.1 Լիարժեք մակնշումով առանցքակալ լինում է 8 տիպի, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են 2 խմբի, այսինք՝ 16 տեսակի, իսկ թերի մակնշումով առանցքակալ գոյություն չունի կամ վիճելի է և անհրաժեշտ է հստակեցնել:

Ընկերության կողմից ձեռնարկված գործողություններ.

1. Կազմակերպված 25.03.2021թ քննարկման ընթացքում մանրամասն ներկայացվելով գոյություն չունենալու հիմնավորումները, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը բացելով մեխանիզմի շահագործման ԽՍՀՄ տարիների տեխնիկական գիրքը՝ անձնագիրը, արձանագրեց մակնշումով 75-170313 Е1Ш3 առանցքակալ և ընդունելի՝ անվիճելի համարեց Ընկերության դիրքորոշումները և պարզաբանեցին որ առաջարկվող պայմանագրում ամրագրելով 75-170313 առանցքակալը իրականում որևէ առանչություն չունի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների հետ և ակնհայտ տարբերվում է իրականում պահանջվող 75-170313 Е1Ш3 առանցքակալից և մեկնաբանեցին, որ ի սկբզանե վրիպել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցները, ովքեր սխալ են արտագրել առանցքակալի լրիվ մակնշումը՝անունը :

*Ընդունելի համարեցին 6313 կամ 313 կամ 65*140*33 չափսերով առանցքակալ՝ հաշվի առնելով որ վերջիններս նույնն են ինչ 75-170313 Е1Ш3 առանցքակալը, որը հատուկ նշանակության է և դուրս է արտադրությունից և ԽՍՀՄ տարիներին դրանք օգտագործվել*

են հատուկ պատվերներով՝ ատոմային սուզանավերի և ատոմային սառցահատ նավերում, ինչպես նաև տիեզերական մեխանիզմներում

2. Տրամադրվել է փաստաթուղթ, որում անձանագրվում է իրականում պահանջվող առանցքակալը՝ 75-170313 Е1Ш3:

3. Ընկերության կողմից իրականացված հարցումներին ի պատասխան ՀՀ Ֆինանսների Նախարարության խորհրդատուները տեղեկացրել են, որ հարցի կարգավորմամբ անհրաժեշտ է զբաղվի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 57-րդ կետի.

57. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Իսկ ավելի հստակ՝ համաձայն 58-րդ կետի.

58. Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: «Գնումների մասին» Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

4. Ներկայացվել է, որ նշված թերի մակնշմամբ առանցքակալ գոյություն չունի, հետևաբար կնքել պայմանագիր 17-րդ չափաբաժնի մասով անիմաստ է, քանի որ պահանջարկ երբեք չի կարող լինել, հետևաբար մատակարարելն անհնար է:

Կան առանցքակալներ՝ 75-170313 ЕУШ6 և 75-170313 /Е1Ш1-ից Е1Ш8/ արտատպված մակնշումներով, որտեղ

- *Е 1 – մակնշումը սեպարատորի տեսակն է՝ լինում է մի քանի տիպերով,*
- *Ш – մակնշումը տատանումների (уровня выбрацыи) բնութագրիչ ինդեքսն է*

5. Այդ մասով ընթացակարգը չկայացած հայտարարել՝ №75-170313 ՏՈՒ 4477-Է-82 առանցքակալի գոյություն չունենալու հիմքով պայմանավորված:

Համաձայն սույն թ-ի ապրիլի 13 կնքված պայմանագրի, Ընկերությունը դիմել է որպեսզի իրականացվի 17 չափաբաժնի մասով հստակեցում 75-170313 առանցքակալի

մակնշման վերաբերյալ, որպեսզի պայմանագրով սպանձնած պարտավորությունները իրականացվեն պատշաճ:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Առանցքակալների չմատակարարման հինքերը

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ դրույթը սահմանում է .

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված առանցքակալները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար

2. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

Համաձայն 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ հանդիսացող դրույթի՝ Ընկերությունն իրավունք չունի մատակարարելու 75-170313 E1Ш1- E1Ш8 մոդիֆիկացիաներով կամ 6313 առանցքակալ 75-170313 առանցքկալի փոխարեն, առանց որև պաշտոնական փաստաթղթի, իսկ գնորդն իրավունք չունի ունդունելու 75-170313 առանցքկալի փոխարեն 75-170313 E1Ш1- E1Ш8 մոդիֆիկացիաներով առանցքակալներից որևէ մեկը,

Իսկ բանավոր ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համար ընդունելի կլինեն 75-170313 E1Ш1- E1Ш8 առանցքակալները ևս քանի, որ մակնշման որոշակի մասը համընկնում է, դա Ընկերության համար բավարար հիմք չէ, քանի որ հակասում է 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ հանդիսացող դրույթին Պարտավորությունները ծագում են պայմանագրից և կատարվում են պատշաճ ըստ պայմանագի դրույթների:

Ինչ վերաբերվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշմանը Ընկերությունը երբևիցե չի հրաժարվել իր պարտավորություններից, ներկայացնում ենք փաստական ապացույցներ, որ մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Ընկերությունը պատշաճ կատարել է ստանձնած պարտավորությունները բոլոր չափաբաժինների մասով, իսկ այդ ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 27.05.2021թ-ին էլեկտրոնային պաշտոնական հասցեին է ուղղարկվել գործարանի կողմից երաշխիքային նամակ մանրամասն հիմնավորումներով, այնուհետև 3.06.2021թ-ին Ընկերության գրությունը հարցի վերջնական կարգավորմանն ուղղված:

Դրանք մնացել են անպատասխան մինչ օրս …

Գրությանը դրական պատասխանելու պահից հաշված ժամեր անց կմատակարարվեր հստակեցված, գոյություն ունեցող առանցքակալներ 10 հատ 420 000 դր գումարային արտահայտությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ ստրատեգիական փակ տարածք և կարևոր հատուկ նշանակության կառույց և նշված առանցքակալի լրացուցիչ տառերը և թվերը, որոնք առանցքակալի տեխնիկական բնութագիրը մեծ փոփոխությունների ենթարկող մեծություններ են և ըստ ծանաբեռնվածության ու բարձր արագության տակ հնարավոր է վթար հետևաբար, առանց հստակեցման հնարավոր չէ մատակարարում իրականացնել:

Նշենք նաև, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն իր վրիպակները չլուսաբանելու համար գնման ընթացքում հարցի կարգավորման համար չի ձեռնարկել որևէ գործողություն, ընդհակառակը խնդիրը կարգավորումից խուսափելու համար սահմանված ժամկետում չի պատասխանել Ընկերության գրություններին, և հաշվի առնելով, որ կազմվել է սխալ առանցքակալի մրցույթ, որը չհիմնավորված է և գնման ընթացքում գնահատող հանձանժողովը ևս վրիպել է, ուստի պայմանագրով իր պարտավորություններից հրաժարվելու լավագույն միջոցը պատասխանատվությունից խուսափելն է:

Այսպիսով, ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին անհրաժեշտ № 75-170313 Ε1Ш3 մակնշմամբ առանցքակալը արտադրվել է սովետական տարիներին իսկ ներկայումս այդ առանցքակալը արտադրվում է № 6313 մակնշմամբ: Այսինքն՝ սովետական տարիներին արտադրված № 75-170313 Ε1Ш3 մակնշմամբ առանցքակալը և ներկայումս արտադրվող № 6313 մակնշմամբ առանցքակալը նույնական են, և ունեն նույն տեխնիկական բնութագիրը: Հաշվի առնելով այդ հանգամանքը «Սենտրալ» ՍՊԸ-ն դիմելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին առաջարկել է մատակարարել ճշգրիտ մակնշմամբ առանցքակալ, սակայն պատվիրատուն թողնելով մասնակցի առաջարկը անպատասխան՝ ըստ էության զրկել է վերջինիս պայմանագրով ստանձնած իր պարտականությունները պատշաճ կատարելու հնարավորությունից, որից հետո պայմանագրով ստանձնած պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառաբանությամբ պայմանագիրը միակողմանի լուծել է: Ելնելով նշյալ հանգամանքներից կարող ենք փաստել, որ մասնակիցը պայմանագրով ստանձնած պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, սակայն պատվիրատուի անգործության հետևանքով չի կարողացել այդ պարտավորության կատարումը հասցնել իր տրամաբանական ավարտին: Ելնելով նշյալից խնդրում ենք Մասնակցին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում:

Ցնկանում ենք նշել, որ «Սենտրալ» ՍՊԸ պատրաստակամ է նույնիսկ այս փուլում, եթե իրականում առանցքակալը սխալ մակնշված անհրաժեշտ է, հստակեցնելուց հետո անհապաղ մատակարարում իրականացնել:

Ընկերությունը տարիների ընթացքում գնումների ոլորտում որևիցե խախտումներ չի իրականացրել, ավելին՝ իրականացված մատակարարումների շնորհիվ Պետությունը ունեցել է մեծ տնտեսումներ, իսկ պատերազմի ընթացքում իրականացրել մեքենաների շարժիչների և մի շարք ագրեգատների էքսպրես ներմուծումներ:

Հաշվի առնելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի չհիմնավորված գրավոր բողոքը խնդրում եմ Ընկերության հանդեպ կասեցնել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/171 ընթացակարգը»:

4. <u>ՍՑ-LO-2021/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սենտրալ» ՍՊԸ-ի միջև 13.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21-01/032» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 17-րդ չափաբաժնով սահմանված N75-170313 ՏՈՒ 4477-Է-82 տեխնիկական բնութագրով 10 հատ առանցքակալի մատակարարումը պետք է մատակարարվի պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 11.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 11.06.2021թ.-ի թիվ Ε/13/1493-21 ծանուցման

համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 8-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-րդ, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 13-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Սենտրալ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի ապրիլի 13-ին կնքվել է թիվ 01/032 պայմանագիրը՝ 1050108 (մեկ միլիոն հիսուն հազար հարյուր ութ) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ առանցքակալները, որոնց ընդհանուր գինը կազմում է 420000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի.

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,

- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան' Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,

- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք' պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցե ով»:

- Հավելված N 1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Պատվիրատուն Մասնակցին տեղեկացրել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սենտրալ» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի ապրիլի 13-ին կնքած թիվ 01/032 պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով:

v. «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «Подшипниковый завод» ընկերության կողմից 05.07.2021թ.-ի գրությունը, որով վերջինս, ի պատասխան «Սենտրալ» ՍՊԸ-ի գրության հայտնել է, որ ГОСТ-от ТУ 4477-Э արտադրության առանցքակալ N 75-170 313 գոյություն չունի:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10091-2021 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման

պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը)*:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Սենտրալ» ՍՊԸ-ի միջև 13.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21-01/032» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 17-րդ չափաբաժնով սահմանված N75-170313 ՏՈՒ 4477-Է-82 տեխնիկական բնութագրով 10 հատ առանցքակալի մատակարարումը պետք է մատակարարվի պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր: www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 11.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 11.06.2021թ.-ի թիվ Ε/13/1493-21 ծանուցման

համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 8-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-րդ, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 13-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Սենտրալ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի ապրիլի 13-ին կնքվել է թիվ 01/032 պայմանագիրը՝ 1050108 (մեկ միլիոն հիսուն հազար հարյուր ութ) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ առանցքակալները, որոնց ընդհանուր գինը կազմում է 420000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի.

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,

- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան' Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,

- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք' պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցե ով»:

- Հավելված N 1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Պատվիրատուն Մասնակցին տեղեկացրել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սենտրալ» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի ապրիլի 13-ին կնքած թիվ 01/032 պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «Подшипниковый завод» ընկերության կողմից 05.07.2021թ.-ի գրությունը, որով վերջինս, ի պատասխան «Սենտրալ» ՍՊԸ-ի գրության հայտնել է, որ ГОСТ-от ТУ 4477-Э արտադրության առանցքակալ N 75-170 313 գոյություն չունի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած

պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10091-2021 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/171 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**